

ԱՆՈՐՈՇ ԱՌՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է անորոշ առման քերականական կարգի դրսևորման առանձնահատկությունների վերլուծությունը արևելահայերենում: Գրական արևելահայերենում այն արտահայտվում է գրո վերջավորությամբ և **մի** անորոշ հոդի միջոցով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ **մի** բառը բազմիմաստ է և կարող է գործածվել իբրև անորոշ հոդ, իբրև թվական՝ համարժեք մեկին, իբրև վերաբերական, իբրև հրամայականի ժխտական ձևույթ արգելական հրամայականի կազմում: Անորոշ հոդը կարող է նաև ոճական կարևորագույն միջոց դառնալ գեղարվեստական պատկերի ստեղծման համար:

Հանգուցային բառեր՝ առկայացման քերականական կարգ, արևելահայերեն, գոյական, անորոշ հոդ, գրո վերջավորություն, եզակի և հոգնակի թիվ, հատուկ անուն, հոլովման համակարգ, որոշիչ, թվական:

Անորոշ առումը ցույց է տալիս չտարորոշված առարկա կամ անձ: Այն ունի արտահայտության երկու միջոց՝ գրո վերջավորությունը և **մի** անորոշ հոդը:

Անորոշության իմաստն ունի տարբեր նրբերանգներ, որոնց առանձնացումը հաճախ դժվարանում է, քանի որ խոսքում իմաստային շատ նրբերանգներ այնքան են ներհյուսված, որ նրանցից որևէ մեկին առավելություն տալը դժվար է:

Այնուամենայնիվ, փորձենք առանձնացնել անորոշ առման քերականական կարգի արտահայտման ձևաիմաստային առանձնահատկությունները արևելահայերենում: Ծագած լինելով **մեկ-մի** թվականից՝ այն իմաստային դաշտում աստիճանաբար հեռացել է նրանից, և

պիտի համաձայնել է. Տասնապետյանի այն դիտողությանը, որ այն գործառական դաշտում, հատկապես արևմտահայերենում, չպիտի շփոթել թվականի հետ. «Եթե արևելահայերենի մեջ այս երկու տարբերը յաճախ կրնան իրարու մերձադր նշանակութեամբ գործածուիլ, արևմտահայերենի *մը*-ն, իբրև յոդ շատ աւելի վճռապէս կը տարբերի մէկ թուական որոշիչէն: Մեր հետագայ օրինակները որոշապէս ցույց կու տան թէ մէկ եւ մը համարժէք չեն և թէ հետեւաբար «Մէկը չի կրնար երբէք իբրև յոդ գործածուիլ» – Այտընեան»¹:

Հետևաբար հեղինակը իրավացի չի համարում նաև Մ. Աբեղյանի այն դիտարկումը, որ «մի բառն ամէն դէպքում եւս թուական է», և թէ «բնաւ չի տարբերում միւս քանականական ածականներից»²:

Մի անորոշ հոդը բնորոշ է այլ լեզուների ևս: Ըստ Հ. Աճառյանի՝ այն ավելի վաղեմի ծագում ունի, քան որոշյալը: «Հարց է, թե լեզուների մեջ ո՞ր հոդն է ավելի առաջ սկսում, որոշյա՞լ, թե՞ անորոշ: Բայց երևի թե անորոշ հոդը ավելի հին է, որովհետև նա ծագում է *մի* թվականից, որ լեզվի մեջ միշտ էլ պատրաստ գոյություն է ունեցել: Որոշիչ հոդն է, որ ժամանակի ընթացքում պիտի ստեղծվի այս կամ այն ձևից»³:

Գրաբարում արդեն կար **մի** բառի գործառնությունը անորոշ առման իմաստով,

1 Տասնապետեան Է., Քերականութիւն, Անթիլիաս, 1990, էջ 127:

2 Տե՛ս Աբեղյան Մ., Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 191 և Տասնապետեան Է., նշվ. աշխ., էջ 126:

3 Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. 3, Եր., 1957, էջ 955:

օրինակ՝ «Եւ գտեալ զայր *մի* թարգման վրացերէն լեզուի», «...Այր *մի* երէց աղուան ազգաւ Բենիամէն անուն» /Կոր., 110/:

Միջին հայերէնում *մի*-ն՝ իբրև անորոշ առման արտահայտության հիմնական ձևույթ, ամրակայվում է և հանդես է գալիս *մ*, *մն* տարբերակներով: Յ. Կարստը, խոսելով *մի* ձևույթի՝ իբրև անորոշության իմաստի արտահայտման միավորի մասին, վկայում է, որ միայն մեկ տարբերակում է հանդիպել *մին* ձևին՝ ծայնավորից առաջ՝ «չտայ փող *մին* յետ»¹:

Ձևաիմաստային առումով *մի* անորոշ հոդի բոլոր հատկանիշները, որոնք բնորոշ են միջին հայերէնին, անցնում են արևմտահայերէնին: *Մի*-ն՝ իբրև անորոշ հոդ, ամբողջովին հեռացել է *մի* թվականից, և արդյունքում ձևավորվել է մի միավոր, որի բոլոր գործածություններում պահպանվում է անորոշության իմաստը²:

Գրական արևելահայերէնում անորոշ առումն արտահայտվում է գրո վերջավորությամբ (աննշույթ) և *մի* անորոշ հոդի միջոցով: Համեմատենք՝ *Այսօր նամակ սրացա* և *Այսօր մի նամակ սրացա* /ինչոր նամակ/: *Մի* անորոշ հոդի գործածությունը բացառվում է հոգնակի թվում: Անհնար է *Այսօր մի նամակներ սրացա* կառույցը³: Հ. Պետրոսյանը սա բացառում է *մի* անորոշ հոդի մեջ թվային եզակիության իմաստի պահպանմամբ. «Որոշյալ առումը թեև հակադրվում է անորոշ առմանը նաև *մի* հոդի առկայության դեպքում, սակայն այս հակադրությունը նախորդի նման հստակ չէ: Եվ այդ ամենից առաջ այն պատճառով, որ *մի*-ի դեպքում անորոշ առումը կարող է չունենալ իր հակադրությունը որոշյալ պլանում և որ *մի* հոդով ևս ինչ-որ չափով կա «առկայացում», միայն թե այն կատարվում է ոչ թե իրադրական հատկանիշով, այլ մթագնած քանակային-միայնության

հատկանիշով /ընդգծումը մերն է՝ Ի. Մ./: Եվ վերջապես *մի* հոդը արտահայտության պլանում միշտ չի ուղեկցվում որոշիչ հոդի հակադրությամբ: Այսպես, օրինակ՝ միայնության գաղափարը գրկում է *մի* հոդին որոշիչ հոդի նկատմամբ հակադիր պլան ունենալու նաև հոգնակի բառաձևերի շարքում»⁴:

Մ. Ասատրյանը, մանրամասն ներկայացնելով *մի* անորոշ հոդի ձևավորման պատմությունը և քերականագիտության մեջ եղած մոտեցումները *մի* թվականի, *մի* անորոշ հոդի և *մի* անորոշ դերանվան իմաստային հարաբերակցության մասին, իրավացիորեն նշում է, որ՝

1. *մի* անորոշ հոդը արդեն միջին հայերէնում ձևավորվել էր և ուներ հետադաս գործառույթ իբրև այդպիսին,

2. միջին հայերենն արդեն ուներ *մեկ* քանակական թվականը /մի-ակ/, բայց *մի*-ն պահպանում էր իր գործածությունը իբրև թվական,

3. *մի*-ն ուներ անորոշ դերանվան գործառույթ՝ *ինչ-որ* իմաստով՝ սկսած գրաբարից: Ուստի գրական հայերէնում այն կատարում է և՛ թվականի, և՛ անորոշ հոդի պաշտոն⁵:

Եթե գոյականը արտահայտում է առարկայական հասկացության ընդհանուր իմաստ՝ առանց կոնկրետացման, ապա գործածվում է առանց հոդի, օրինակ՝ «*Մոշ* էր ուտում և ինքն իրեն ասում էր, թե *մոշ* է ուտում և շատ հանգիստ է» /ՀՄ, 217/:

Համեմատենք հետևյալ նախադասության հետ. «Ու նույն պահին էլ տեսավ, որ բուռը բացվում է, ու *մոշերը* թափվում են» /խոսքը բռան մեջ հավաքած մոշի մասին է/ /ՀՄ, 217/:

Հաճախ միևնույն բառային միավորը տվյալ խոսքային տիրույթում գործածվում է առանց հոդի /եթե տեսակի ընդհանուր անվանում է/ և հոդով, եթե կա

1 Տե՛ս Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Եր., 2002, էջ 362:

2 Տե՛ս Туманян Э., Артикли в современном армянском языке, Ер., 1963, стр. 198-200:

3 Տե՛ս Պետրոսյան Հ., Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության, Եր., 1976, էջ 161:

4 Նշվ. աշխ., էջ 161:

5 Մանրամասն տե՛ս Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Եր., 1970, էջ 251-270:

դրա՝ ինչ-որ հատկանիշով տարորոշված կոնկրետացումը: Օրինակ՝

«Դու կենդանի *մարդ* ես, / Ամենամա՛րդ *մարդը*,

Սիրո՞ղ *մարդը*, / Քեզ չի կարող ձև տալ ամեն կուժ ու կույս:

Եվ որ չորստառանի «մարդ» կոչվածը կյանքում

Շատ ավելի բարդ է ...» /ՊՍ, 3-րդ, 135-136/:

Համեմատենք՝

«Մարդ կա աշխարհին է շալակած տա՛նում,

Մարդ կա ելել է շալակն աշխարհիս» /ՊՍ, 1-ին, 177/:

Կա պակասավոր բայի հետ սովորաբար ենթական անհոդ է գործածվում, օրինակ՝ Սեդանին *ծաղկաման* կա, պարտեզում *վարդեր* կան:

Սովորույթ դարձած գործողությունների բաղադրյալ անուններում գոյական բաղադրիչը դրվում է անհոդ՝ արտահայտելով ընդհանրացված իմաստ, օրինակ՝ *շնորհակալություն* հայտնել, *ներողություն* խնդրել, *ներում* հայցել, *բարի գիշեր* մատչել, *բարի առավոտ* ասել, *բարև* տալ: Այսպես կարող է լինել նաև դարձվածք դարձած միավորներում, օրինակ՝ *աղյուս* թափել, *հող ու մոխիր* դարձնել, *պոչ* խաղացնել: Սակայն դարձվածքներում գոյականը կարող է լինել նաև որոշյալ, ինչպես՝ *աչքը* վախեցնել, *սիրտը* կոտրել և այլն:

Ի հակադրություն արևմտահայերենի՝ արևելահայերենում հատկացուցիչը անորոշ առումով է դրվում: Օրինակ՝ «Եվ *մատանի* դուռը ետևից վրա բերելով՝ նա մտածեց, որ ամեն մարդ ապրում է իր կյանքը: *Որդու* ուրախությունը որդուն է» /ՀՄ, 343/:

Կոչականը անորոշ է դրվում նույնիսկ հատուկ անվան դեպքում, օրինակ՝ « - Լիլի՜թ, ամնմա՛ն Լիլիթ, դու իմաստուն ես, ասա՛ ինձ, այս ի՞նչ զգացում է, որ բույն է դրել հոգուս մեջ՝ քեզ տեսնելու վայրկյանից» /ԱԻԱԷ, 185/:

Այն անհոդ է գործածվում ոչ թե այն

պատճառով, որ անհայտ է, չտարորոշված, այլ այն պատճառով, որ կոչականը այն անձը կամ առարկան է, որին դիմում է խոսողը: Ըստ որում և՛ կոչականը, և՛ հատկացուցիչը տարորոշված անձ կամ առարկա են ցույց տալիս:

Գոյականը անորոշ է գործածվում, եթե այն որոշիչ-որոշյալ կապակցության որոշչի պաշտոնն է կատարում, ըստ որում՝ այս դեպքում այն կարող է լինել նաև հատուկ անուն, օրինակ՝ *Հովակիմ* պապը, *Արշակ* արքան, *բժիշկ* Արամը և այլն:

Հատուկ անունը հոդ չի ստանում նաև ինքնանվանողական գործառնություն:

Եթե գոյականն ունի *ինչ-որ, ինչ-ինչ, որոշ, յուրաքանչյուր, ամեն* դերանուններով արտահայտված որոշիչ, այն գործածվում է առանց հոդի, օրինակ՝ ինչ-որ դեպք, ինչ-ինչ խոսքեր, յուրաքանչյուր քայլ, ամեն քայլ և այլն: «... Այդ պահերին վառվում էր չարության *ինչ-որ կրակ*, *ինչ-որ սև բոց*, որ լավիլիզում էր դիմացինի դեմքը» /ՊՍԱ, 53/, «... Առժամանակ հետո Ամանեջ հասան *որոշ յուրեր*, որոնք արդեն թխված չէին տեղական թոնրում» /ՊՍԱ, 55/:

Եթե գոյականն ունի քանակական թվականով արտահայտված որոշիչ, ապա կարող է գործածվել անորոշ, եթե շեշտվում է որոշիչը, և որոշյալ առումով, եթե գոյականի շեշտումն է կարևորվում տվյալ կառույցում, օրինակ՝ «*Քսանիկն* *օր* հետո փչան որսորդ Ադամ քեռին տեսավ տրորված ցեխը» /ՀՄ, 160/, «*Երկու ամիս* նա շրջանային հիվանդանոցում էր պառկել» /ՀՄ, 219/:

Գոյականը հաճախ դրվում է առանց հոդի փակագծերում նշվող կառույցներում, որոնք ընդհանրացնող, ամփոփող միտք են արտահայտում, օրինակ՝ «... Ու ձեռք տանում է ուսին՝ ասես հրացանը ցած բերելու համար /որսորդի բնագդական *շարժում*/...» /ՊՍԱ, 13/:

Հոլովական հարացույցում հոդ կարող են ստանալ ուղղական և սեռական-տրական հոլովները, իսկ բացառական,

գործիական և ներգոյական հոլովները հոդ չեն ստանում:

Միակազմ նախադասություններում գոյականը դրվում է առանց հոդի: Օրինակ՝ «Արշակը մտավ ընդարձակ շուկայի սահմանը: *Մի ամբողջ աշխարհ: Լույս, լույս ամեն կողմ: Իրարանցում, եռուզեռ: Կառքեր, կամիոններ, մարդիկ, ձիեր, կանայք, կամիոններ, նորից կառքեր, նորից ձիեր, մարդիկ՝ ցրտահար, արևակեզ, կարմրած, սևացած: Զիչ, աղմուկ, ժխոր, բռնոց, խրխինջ, ծիծաղ, զայրույթ, կապակ, գռռոց, հայհոյանք...*» /ԱԽԱԷ, 423/:

Աստված բառը ուղղական հոլովում անհոդ կիրառություն ունի, օրինակ՝ *Աստված* կոգնի, եթե հավատաս և խնդրես: Բայց սեռական- տրականում այն կարող է հոդ ստանալ, օրինակ՝ Աղոթում ենք *Աստծուն* և խնդրում ներել ու օգնել:

Հոգնակի թիվը կարող է հոդ ստանալ, բացի **իկ** /մարդիկ/, **այք** /կանայք, տիկնայք, պարոնայք/, **ինք** /անձինք/ գրաբարձն հոգնակիներից և **ց** հոլովման պատկանող գոյականներից:

Արևելահայերենում գոյականը կապերի հետ, ի հակադրություն արևմտահայերենի, գործածվում է անհոդ, օրինակ՝ «*Բլրի փակ* գյուղը հանգել էր», «*Վայրի բրդոտ մեղուների փոքր ընտանիքը* թանձր բզզում էր *մաարենու փակ*» /ՀՄ, 161/:

Նպատակի պարագան ևս դրվում է առանց հոդի: Օրինակ՝ Նա գնաց հացի:

Բացականչական նախադասություններում անորոշ առանց միավորները արտահայտում են ընդհանրական իմաստ և խոսքային տվյալ տիրույթում հոդ չեն ստանում, սակայն նրանք առկայացված են տարբերակված իմաստով, օրինակ՝ «*Ի՜նչ հրաշալի աղանանդներ են՝ սպիտակ հիանալի ճառագայթներով: Ի՜նչ կարմիր հակինթներ են, ի՜նչ մաքուր շափյուղներ. ո՞րն ասեն...*» /ԱԽԱԷ, 185/:

Միշտ որոշիչ հոդով է կիրառվում բաղադրյալ ստորոգյալի ենթական, իսկ ստորոգելիական վերադիրը կարող է դրվել և՛ որոշիչ հոդով, և՛ անհոդ, ինչպես՝ *Արմենը* իմ լավագույն *ընկերն* է:

Արմենը հավատարիմ *ընկեր* է:

Հետաքրքիր են *որ* հարաբերական դերանվան որոշյալ և անորոշ դրսևորումները, երբ *որ*-ը կապակցում է որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավոր նախադասության գոյականական անդամին: Այն կարող է հանդես գալ և՛ անհոդ, և՛ հոդով՝ անկախ գլխավոր նախադասության տվյալ անդամի որոշյալ թե անորոշ /նաև մի հոդով/, հատուկ թե հասարակ լինելուց: Օրինակներ՝ «Տափարակի կենտրոնով հոսում է մի ջրառատ *գեղակ, որ* սկիզբ է առնում Ամանեջի սահմաններից ու կորչում նրա սահմաններում» /ՊՍԱ, 11/, «Դարբին *Հովակիմը, որը* առանձին բավականություն էր գգում որսկանի հետ վիճելուց...» /ՊՍԱ, 9/:

Որ հարաբերականը կարող է նաև թվով չհամաձայնել, օրինակ՝ *գրքերը, որ* դու ես բերել // *գրքերը, որոնք* դու ես բերել:

Ճիշտ է նկատել Է. Թումանյանը, որ **մի** անորոշ հոդի իմաստային և գործառական հատկանիշների քննությունը ամբողջացման և մանրամասն վերլուծության կարիք ունի. «Вопрос о категории неопределенного артикля в литературе на грамматике армянского языка еще не менее освещен, чем категория определенного»¹:

Մի բառը բազմիմաստ է և կարող է գործածվել իբրև անորոշ հոդ, իբրև թվական՝ համարժեք մեկին, իբրև վերաբերական, իբրև հրամայականի ժխտական ձևույթ արգելական հրամայականի կազմում:

Մի հոդը կարող է նաև ոճական կարևորագույն միջոց դառնալ գեղարվեստական պատկերի ստեղծման համար: Ըստ որում՝ այս դեպքում նրա գործածության հնարավորությունները սահմանափակ չեն. նրանք գործածվում են արդեն եզակի, աշխարհում միակ առարկաների հետ /ինչպես՝ մի երկինք, մի արև/, վերացականության իմաստի միավորների

1 Туманян Э., նշվ. աշխ., էջ 189:

հետ, օրինակ՝ «... Բուրմունքի հետ հյուս-վում էր *մի քաղցր երազ*» /ՀՄ, 158/, «2գ-վեց *մի լարված լռություն*» /ԱԲԱԷ, 179/:

Պատումի նման՝ շարունակաբար գործածվող պատկերներում **մի** հոդը ոչ թե անորոշություն է արտահայտում, այլ վերաբերմունք ասվածի նկատմամբ, որը, իհարկե, պիտի փոխանցվի ընթերցողին:

Ժամանակ, օր, անգամ բառերի հետ **մի** հոդի գործածությունը ցույց է տալիս չտարորոշված ժամանակ՝ *մի անգամ, մի ժամանակ, մի օր*, իսկ *պահ, վայրկյան, ակնթարթ* բառերի հետ՝ քիչ տևողության ժամանակահատված: Օրինակներ՝ «*Մի օր* իշխանը գորքի մեջ քննական պտույտ անելուց հետո վերադառնում է իր վրանը» /ԱԲԱԷ, 206/, «*Մի պահ* նայում է որսկանին...մի վայրկյանում» /ՊՍԱ, 68/, «Բայց դա տևեց *մի կարճ ակնթարթ*» /ՊՍԱ, 112/, «*Մի րոպե* նա չհասկացավ, թե որտեղից և ինչ արյուն է» /ՊՍԱ, 67/, «Նրան *մի վայրկյան* թվաց, թե ինքը երեկսա է» /ՊՍԱ, 68/: Վերոնշյալ օրինակներում արտահայտվում է ժամանակային կարճատևության գաղափարը: Սրանք չպետք է շփոթել կոնկրետ ժամանակային միավոր արտահայտող գործածությունների հետ /օրինակ՝ *Մի վայրկյանում* վազորդն անցավ 100 մ տարածություն: *Մի րոպեում* նա հաղթահարեց նշված երթուղին: Այս դեպքում **մի**-ն թվական է/:

Մի անորոշ հոդ + գոյական կապակցությունը արտահայտում է չափի իմաստ: Այս կառույցները ժողովրդական լեզվում ձևավորել և ամրակայել են կայուն կապակցություններ՝ փոքրածավալ իմաստի արտահայտման համար, օրինակ՝ *մի կտոր հաց, մի խոտք, մի բերան, մի մասր երեխա, մի փախուսկը պակաս* և այլն: Ընդ որում՝ սրանց մի մասը, հաճախ գործածվելով, դարձել են դարձվածային միավորներ, ինչպես՝ *մի լուծ եզ, մի ծալը պակաս, մի խոտք-մի բերան, մի աչք-մի ականջ* և այլն: Օրինակներ՝ «Դրա դի-

մաց հոտաղ-մշակը *մի փոր* հացի հետ ստանում էր իր ամսական կամ տարեկան վարձը, իսկ Երանոսը՝ միայն *մի փոր* հաց» /ՊՍԱ, 39/, «Ամբողջ գյուղը *մի աչք-մի ականջ* հետևում էր Սրբուհուն» /ՊՍԱ, 102/, «Թող որ ամուսինը նրան ցանցառ էր կոչում, իսկ ուրիշները համարում էին *մի փախուսկը պակաս*» /ՊՍԱ, 102/:

Մի-ն նաև անորոշ դերանուն է, արտահայտում է «*ինչ-որ*» իմաստը, որի գործածությունը դեռևս գրաբարից է գալիս: Այս իմաստով անորոշ հոդի և անորոշ դերանվան սահմանագծումը դժվար է, քանի որ նրանք ուղղված են գեղարվեստական մտքի ձևակերպմանը: Օրինակ՝ «Իսկ եթե *մի ըմբոսը* իր աշխատանքից *մի բռն* պահում էր իրեն համար և չէր ներկայացնում, դրա պատճառով սպասավորները նրան բանտ էին գցում, քաղցած թողնում» /ԱԲԱԷ, 111/:

Մի բառը շարունակում է գործածվել նաև թվականի իմաստով՝ համարժեք **մեկ** բառին, օրինակ՝ «... Իզուր չեն նրանք այնքան տարի *մի օձորքի* տակ ապրել, - նրանք իրար անգիր գիտեն» /ՊՍԱ, 42/, «Պարզորոշ լսվեց հորթուկին կանչող *մի կուլի* բառաչ» /ՊՍ, 3-րդ, 7/:

Այսպիսով, ցանկացած գործածության մեջ **մի** բառն ունի իր իմաստը. **մի** դեպքում՝ վերաբերականի իմաստ, **մի** այլ դեպքում՝ անորոշության, երրորդ դեպքում՝ որոշյալ դարձող տիրույթում և կառույցում նրա գործածությունը, կամ պատումի ընթացքում դրվագի, պատկերի ստեղծման ոճական տարբեր նրբերանգային իմաստներ հաղորդելու նրա գործառնությունը ցույց են տալիս, որ **մի**-ն հեռացել է ծագումնաբանական հիմնիմաստից: Համեմատենք՝ *Սեղանին գիրք է դրված: Ես մի գիրք կարդացի, որն ինձ ազապրեց իմ բարոյությունից:*

Մի-ն թվային անորոշություն կարող է արտահայտել՝ դրվելով թվականի վրա: Այս դեպքում այն ստանում է *մոյր* կամ *մոյրավորապես* իմաստը, օրինակ՝ *մի քսան* գիրք, *մի երեսուն* ուսանող և այլն:

Մի-ն ունի նաև **մի** հետաքրքիր գործա-

ծություն. այն հանդես է գալիս գոյականի հետ, որը որոշակիացվում է, առանձնացվում տվյալ հատկանիշով, որը կարող է արտահայտվել հատկանիշ արտահայտող որոշիչով կամ որոշիչ երկրորդական նախադասությամբ: Օրինակներ՝

«Դու նոր *մի ուժով* նորից ընծուղվել,
Կտրված ճյուղերդ ես վերստին ուղ-
ղել» /ՊՍ, 1-ին, 103/:

«Ինչ լավ է զգալ՝ դու *մի կամուրջ* ես,
Որ շաղկապում է անցյալն ու ներ-
կան...» /ՊՍ, 1-ին, 104/:

«... Նա *մի յոթանասուն փարի* խուլ տն-
քոցով չարչարվում էր կայծակի խանձած
դժար վերքը ծածկելու, ջահելությունը
հատավ դրա վրա, և դեռ այնպես էլ *մի
կարգին* չէր ներքաշել վերքը» /ՀՄ, 161/:

Պարագայական լրացումների հետ
այն նույնպես գործածվում է՝ ստեղծելով
ժողովրդական լեզվամտածողության
տիրույթ /*մի կարգին* չէր ներքաշել կամ՝
Ջահել ընկուզենուն մի լավ ծեծել էին /
ՀՄ, 161/։ Բերված օրինակներում ձևի
պարագայի գործառույթ ունի *մի* + *ձևի
մակբայ* կաղապարը: Այն կարող է նաև
չափի միավորի իմաստ արտահայտել,
օրինակ՝ «Նա երկու տարեկան խնձորե-
նու ..., տաքդեղի տակերով կաղամբի
ջրից *մի քիչ ջուր* էր գողանում /հմմտ.՝
քիչ ջուր խմիր/*մի քիչ ջուր* խմիր/, բայց
ցույց էր տալիս, թե շատ է ծարավ, ան-
ձրև է ուզում» /ՀՄ, 161/:

Մի անորոշ հոդով կարող են ստեղծ-
վել գեղարվեստական մտածողության
հրաշալի օրինակներ, ինչպես՝ *մի կյուր
երկինք, մի կաթիլ քաղցրություն, մի կյուր
բախր* և այլն: Օրինակներ՝ «Երանոսը
անում է այն, ինչ կարող է – չի խլում *մի
կյուր բախր*, որ վիճակվել է Սրբուհուն»
/ՊՍԱ, 72/, «Քիչ հետո նա վեր կացավ, *մի
պուր ջուր* ուզեց, որ բերանը թացացնի»
/ՊՍԱ, 169/, «Իսկ դա *մի պճեղ բախր* էր,
որ նա խլել էր կյանքի թաթերից, այն *մի
պարսոռ հացը*, որով պիտի ապրեր, պիտի
ապրե՛լ կարողանար այն ահավոր կյան-
քում, որ վիճակվել էր նրան» /ՊՍԱ, 75/:

Մի-ն իբրև վերաբերական հաճախ

է գործածվում խոսակցական լեզվում՝
«– Ա՛յ աղջի, *մի* էս անտերը կարկատի.
աչքերս լավ չեն տեսնում ...» /ՊՍԱ, 170/,
«– Երանո՛ս, *մի* վազի՛ր, տար–տուր ... » /
ՊՍԱ, 40/:

Մի-ն՝ իբրև հոդ, ունի իմաստային
բազմաթիվ գործածություններ, որոնք
ոչ միայն չտարորոշված առարկա կամ
անձ են ցույց տալիս, այլև հաճախ տա-
րորոշված: **Մի**-ն թվականի իմաստով
իր գործառույթը պահպանել է անշուշտ,
բայց ձևավորվելով նրանից՝ որպես հոդ
իր բոլոր գործածություններում հեռացել
է թվային իմաստից: Այն գեղարվեստա-
կան խոսքի կառուցման կարևորագույն
միջոցներից մեկն է, որի շնորհիվ հեղի-
նակը ստեղծում է հրաշալի պատկերներ,
օրինակ՝ *մի կյուր ամպի փակ, մի կյուր
սառույց, մի արև, մի քաղցրություն, մի
լույություն* և այլն:

Այսպիսով, անորոշ առումը արտա-
հայտվում է գրո ձևությամբ և **մի** հոդով:
Նրանց ձևաիմաստային դրսևորումները
տարբերվում են իրարից: Դրանց տար-
բերակիչ հատկանիշներն են՝

Մի անորոշ հոդը արևելահայերե-
նում դրվում է գոյականից առաջ, արևմ-
տահայերենում՝ նրանից հետո, իսկ գրո
ձևությի դեպքում գոյականը չունի հոդ:

Մի անորոշ հոդը գործածվում է բո-
լոր հոլովներով արտահայտված գոյա-
կանների հետ, իսկ որոշիչ հոդը առկա է
ուղղական և տրական հոլովներում, ուս-
տի անձնության են ուղղական և տրական
հոլովները՝ իբրև որոշյալին հակադրվող
կառույցներ:

Անձնության անորոշը բնորոշ է եզակի և
հոգնակի թվերին /այգի – այգիներ/, իսկ
մի անորոշ հոդը՝ միայն եզակի թվին /մի
աշակերտ, մի աշակերտներ չի կարող լի-
նել/:

Մի անորոշ հոդը տարբերվում է նաև
մի թվականից. համեմատենք՝

«Նա *մի աղջիկ ունի*» և «*Մի աղջիկ է
մտել նրա սիրտը*»: Ըստ որում՝ **մի** թվա-

1 Մանրամասն տե՛ս Մարգարյան Ա., Հայոց լեզվի
քերականություն, Ձևաբանություն, Եր., 2004, էջ 171:

կանի հետ գոյականը կարող է դրվել որոշյալ և անորոշ առումներով, օրինակ՝ «Մի գիրք գնի՛ր, որ նվիրեմ փոքրիկին»: «Նրա գրքերից մի գիրքը ընտրի՛ր, որ նվիրեմ փոքրիկին»:

Մի թվականը շեշտակիր է, իսկ հոդը կամ վերաբերականը՝ ոչ: Օրինակ՝ «Մի՛ ժամ կպարապես», «Մի՛ շաբաթ է մնացել աշխատանքի ավարտին»:

Խոսակցական լեզվում հաճախ

նկատվում են հոդի գործածության՝ գրական հայերենին ոչ բնորոշ և անթույլատրելի ձևեր. «Մի + *հոգնակի* կադապարի իմաստը ժամանակակից արևելահայերենում շարահյուսական միջոցներով է արտահայտվում՝ սովորաբար դերանունների կամ եղանակավորող որոշ բառերի օգնությամբ՝ ինչ-որ գործեր, ինչ-ինչ մարդիկ...»:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԱԽԱԷ – Ավետիք Իսահակյան, Արձակ էջեր, Երևան, 1963:
2. Կոր. – Կորին, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:
3. ՀՄ – Հրանտ Մաթևոսյան, Երկեր, Երևան, 1985:
4. ՊՍԱ – Պարույր Սևակ, Ամանեց, Երևան, 2014:
5. ՊՍ – Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հտ. 1, Երևան, 1972, հտ. 3, Երևան, 1973:

ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ГРАММАТИЧЕСКОГО КАТЕГОРИЙ НЕОПРЕДЕЛЕННОСТИ В ВОСТОЧНОАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ИРИНА МЕЛКОНЯН

Соискатель кафедры диаспорологии Ереванского государственного университета

В статье представлен анализ особенностей проявления грамматического категорий неопределенности в восточноармянском языке. В литературном восточноармянском языке оно выражается нулевым окончанием и с посредством неопределенного артикля «մի». Исследования показывают, что «մի» многозначное слово и может быть использовано в качестве неопределенного артикля, как числительное, что эквивалентно одному, как реляционный, как отрицательный морфем в составе повелительного наклонения. Неопределенный артикль может также стать стилистическим важным средством для создания художественного образа.

THE PECULIARITIES OF THE MANIFESTATION OF INDEFINITE ARTICLE OF GRAMMATICAL CATEGORY IN EASTERN ARMENIAN

IRINA MELKONYAN

PHD Applicant in the Chair of Diaspora Studies of Yerevan State University

The Article presents the analysis of the peculiarities of the manifestation of the indefinite article of grammar category in the Eastern Armenian. In the literary Eastern Armenian it is expressed by the zero ending and by the indefinite article «a». Studies have shown that word «a» has different meanings and it can be used as an indefinite article, as numeral, as denial of the imperative. The indefinite article can become the most important way to crate artistic images.

1 Աղաջանյան Զ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007, էջ 231: